**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

**№ 02/05.4/11580-2021**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**
**ՊԱՐՈՆ ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Ավետիսյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (Պ-827-29.12.2020-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 111 - Ա որոշումը:

**ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ**

Կատարող՝ Զ. Դավեյան
Հեռ. 515685

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-827-29.12.2020-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասում լրացնել նոր պարբերություն, այն է՝ գրավատուն և գրավառուն պարտավոր են շարժական գույքի գրավի պայմանագրով ամրագրել գրավատուի, կամ նրա լիազորված անձի կողմից գրավադրված տրանսպորտային միջոցով պետական սահմանը հատելու իրավունքը, կամ դրա սահմանափակումը:

Առաջարկվող կարգավորումը հիմնավորվում է նրանով, որ ներկայումս գործող կարգավորումներն ամբողջապես չեն կարգավորում գրավատուի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից գրավադրված տրանսպորտային միջոցով Հայաստանի Հանրապետության սահմանը հատելու հետ կապված պրակտիկ խնդիրները: Արդյունքում գրավատուն ցանկացած պահի կարող է գրավադրված տրանսպորտային միջոցով հատել Հայաստանի Հանրապետության սահմանը՝ այդպիսով ռիսկի տակ դնելով գրավադրված տրանսպորտային միջոցի իրացվելիությունը:

Վերոգրյալի համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ այն հարցին, թե գրավատուի, կամ նրա լիազորված անձի կողմից գրավադրված տրանսպորտային միջոցով պետական սահմանը հատելու իրավունքը գործնականում սահմանափակելու միջոցներ առկա են, թե՝ ոչ:

Այս առումով հարկ է նշել, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Հարկ է նշել, որ ներկայումս ՀՀ պետական սահմանով՝ անձանց, տրանսպորտային միջոցների, կենդանիների, բեռների և այլ գույքի բացթողնման գործառույթ իրականացնող լիազոր մարմինը ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգավորումների լույսի ներքո՝ նախագծով առաջարկվող կարգավորումների առումով որևէ իրավասությամբ օժտված չէ: Առկա չեն նաև նախագծով առաջարկվող կարգավորումների կիրառման ապահովմանն ուղղված համապատասխան կառուցակարգերը:

Բացի այդ, Նախագծին հարկ ենք համարում անդրադառնալ պայմանագրի ազատության սկզբունքի, ինչպես նաև գրավի առարկայի օգտագործման և տնօրինման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ամրագրված կարգավորումների վերլուծության լույսի ներքո: Այսպես.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածը, ի թիվս քաղաքացիական օրենսդրության այլ հիմնարար սկզբունքների, ամրագրում է նաև պայմանագրի ազատության սկզբունքը:

Օրենսգրքի 238-րդ հոդվածով կարգավորվում են գրավի առարկայի օգտագործման և տնօրինման հետ կապված հարաբերությունները: Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավատուն իրավունք ունի օգտվելու գրավի առարկայից՝ դրա նշանակությանը համապատասխան, այդ թվում՝ դրանից ստանալու պտուղներ և եկամուտներ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **գրավառուն** իրավունք ունի օգտվելու իրեն հանձնված գրավի առարկայից **միայն պայմանագրով** նախատեսված դեպքերում գրավատուի պահանջով հաշվետվություն ներկայացնելով դրա օգտագործման մասին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ գրավադրված տրանսպորտային միջոցով ՀՀ պետական սահմանը հատելու իրավունքի կամ դրա սահմանափակման վերաբերյալ իմպերատիվ պահանջի փոխարեն անհրաժեշտ է քննարկել հայեցողական կարգավորման ամրագրման հարցը, մասնավորապես՝ Օրենսգրքում ամրագրելով դրույթ առ այն, որ գրավատուն և գրավառուն ***կարող են*** շարժական գույքի գրավի պայմանագրով ամրագրել գրավատուի, կամ նրա լիազորված անձի կողմից գրավադրված տրանսպորտային միջոցով ՀՀ պետական սահմանը հատելու իրավունքը կամ դրա սահմանափակումը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ ներկայացված նախագիծը վերը նշված դիտարկումների համատեքստում լրամշակման կարիք ունի:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 111 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

---

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Վահե Դանիելյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (Պ-827-29.12.2020-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ
Երևան

*ՆԱԽԱԳԻԾ*

*Պ-827-29.12.2020-ՊԻ-011/0*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-239 քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 238-րդ հոդվածի 3-րդ մասում լրացնել նոր պարբերություն.

« Գրավատուն եւ գրավառուն պարտավոր են շարժական գույքի գրավի պայմանագրով ամրագրել գրավատուի, կամ նրա լիազորված անձի կողմից գրավադրված տրանսպորտային միջոցով պետական սահմանը հատելու իրավունքը, կամ դրա սահմանափակումը:»:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայումս գործող իրավանորմերը ամբողջապես չեն կարգավորվում գրավատուի (կամ նրա կողմից լիազորված անձի) կողմից գրավադրված տրանսպորտային միջոցով Հայաստանի Հանրապետության սահմանը հատելու հետ կապված պրակտիկ խնդիրները: Արդյունքում, գրավատուն ցանկացած պահի կարող է գրավադրված տրանսպորտային միջոցով հատել Հայաստանի Հանրապետության սահմանը՝ այդպիսով ռիսկի տակ դնելով գրավադրված տրանսպորտային միջոցի իրացվելիությունը: Պրակտիկայում վերոգրյալ իրավակարգավորման բացակայությունը հանգեցնում է մի շարք խնդիրների, ինչի մասին է վկայում նաեւ մեր կողմից ներկայացված գրությանն ստացված պատասխանը, որով պարզ է դարձել, որ 15.02.2020թ. դրությամբ ժամկետանց թվով 1,443 ավտովարկերի դիմաց գրավադրված տրանսպորտային միջոցներից շուրջ 42%-ը՝ 607 ավտոմեքենաներ արդեն հատել են ՀՀ սահմանը, իսկ 836 հատ գրավի առարկա տրանսպորտային միջոցները (շուրջ 58%) գտնվում են ՀՀ-ում:

Միաժամանակ տիրապետում ենք այնպիսի տեղեկատվության, ըստ որի գրավի առարկա հանդիսացող եւ երկրից բացակայող ավտոմեքենաների 70-80%-ը տարհանվել է երկրից քրեական խմբավորումների միջոցով, որոնք էլ հետագայում կազմակերպել/ ձեւակերպել են մեքենաների շինծու վթարներ, փոխել են տրանսպորտային միջոցների նույնականացման համարները կամ ամբողջությամբ քանդել եւ մասնատել են այդ մեքենաները ու վաճառում որպես պահեստամասեր:

06.05.2020թ. ստացել ենք պատասխան գրություն մեր հարցմանը՝ ըստ որի հարցմանը պատասխան ներկայացրած կազմակերպությունում առկա են թվով 2370 խնդրահարույց ավտովարկեր, որից 1956-ը գտնվում են խնդրահարույց վարկերի գանձումն ապահովվող եւ դատական ակտերի հարկադիր կատարումը սպասարկող բաժնում, իսկ 414-ը՝ ավտովարկերի գանձումը եւ դրանց գրավերի հայտնաբերումն ապահովող բաժնում:

Նշված վարկատեսակով շուրջ 605 վարկային գործերով ի սկզբանե ընդհանրապես որեւէ վճարում վարկառուների կողմից չի կատարվել, ինչը փաստում է վարկառու/գրավատուների՝ ի սկզբանե հանցավոր միտումներ ունենալու մասին: Ըստ ձեռք բերած տեղեկությունների գրավի առարկա հանդիսացող տրանսպորտային միջոցներից մոտ 655 տրանսպորտային միջոց /մոտ 30%/, որոնք գրավադրված են հարցմանը պատասխանած կազմակերպությունում, դուրս են բերվել ՀՀ-ից, որի արդյունքում՝ կազմակերպությանը պատճառվել է շուրջ մոտավոր 2.500 000 000 ՀՀ դրամի վնաս: Ակնհայտ է այն իրողությունը, որ այս գումարի վերականգնումը կավելացնի պետական բյուջեի եկամուտները՝ հարկային պարտավորությունների տեսքով:

Խնդրահարույց վարկերի ուսումնասիրմամբ պարզվել է, որ հաճախ լինում են դեպքեր, երբ ավտոմեքենաներն իրականում ձեռք են բերվում եւ գրավադրվում են ոչ թե ձեւակերպված վարկառուի, այլ երրորդ անձի համար վերջինիս ուղղորդմամբ, դրդմամբ, խաբեությամբ, ինչի հետեւանքով ձեւակերպված

վարկառուները չեն կատարում իրենց վարկային պարտավորությունները եւ հետագայում հայտնվում են նյութական եւ իրավական ծանր վիճակում: Գումարների բռնագանձման պահանջներն ուղղվում են ընդդեմ ձեւակերպված վարկառուների, այլ ոչ թե վարկի եւ տրանսպորտային միջոցի իրական տիրապետողի:

Առավել կասկածելի եւ առերեւույթ հանցագործության հատկանիշներ պարունակող գործերով ստեղծվել են նյութեր, որոնք ուղարկվել են հիմնականում ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության Մաշտոցի բաժին, որտեղ նախապատրաստված նյութերով հարուցվել են քրեական գործեր եւ ուղարկվել են նախաքննության: Սույն թվականի մայիսի 6-ի դրությամբ Աջափնյակ եւ Դավիթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննվում են թվով 55 քրեական գործեր՝ 135 դրվագներով, 10 անձի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, որոնցից 3-ը կալանավորված են, 1-ի նկատմամբ կիրառվել է գրավ, 5-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում եւ խափանման միջոց է ընտրվել կալանքը, իսկ 1-ի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը չհեռանալու մասին: Շուրջ 20 քրեական գործեր քննվում են ՀՀ քննչական կոմիտեի տարբեր ստորաբաժանումներում: Գործակալության կողմից ներկայացվել են թվով 5 հաղորդումներ՝ հանցագործության կատարման մասին, որոնցով դեռ եւս չունենք՝ քրեական գործը հարուցելու կամ դրա հարուցումը մերժելու մասին որեւէ որոշում»:

Նախագիծը լուծում է կարեւորագույն խնդիր, այն է՝ գրավադրված տրանսպորտային միջոցների վերադարձելիության ապահովումը. նախագծի դիսպոզիցիայի համաձայն՝ գրավատուին հնարավորություն է տրվում հատել Հայաստանի Հանրապետության սահմանը բացառապես գրավառուի համաձայնությամբ՝ այսպիսով նվազագույնի հասցնելով գրավադրված տրանսպորտային միջոցի հնարավոր կորստի ռիսկը:

Վերոգրյալ խնդրով է պայմանավորված նաեւ ավտովարկերի համար սահմանված բարձր տոկոսադրույքը. գրավառուները, ավտովարկերի համար բարձր տոկոսադրույք սահմանելով, փորձում են հնարավորինս նվազեցնել Հայաստանի Հանրապետության սահմանից ավտոմեքենաների տարհանման արդյունքում առաջանալիք վնասի հնարավոր ռիսկերը:

Այսպիսով, Նախագծի ընդունման դեպքում, կկանխվեն առանց գրավառուի համաձայնության գրավադրված տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետության սահմանից հատելու հետ կապված հնարավոր խնդիրները, կապահովվի գրավի առարկայի վերադարձելիությունը եւ որպես վերջնական արդյունք, կնվազի ավտովարկերի համար սահմանված տոկոսադրույքը: